ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԺԱ ՏԱՐԻ ԹԻՒ 44

1896 ՅՈՒՆՈՒԱՐ 1

1895 ԴԵԿՏԵՄԲԵՐ 20 (Հ. Տ.)

ՔՈՒՔԱՍԱՓԻ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամէն անգի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած է, ամբողջ 11րդ չրջանի (95 օգոստ.—96 մայիս) բաժնորդագինն է 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսով որ ուզուի, ամէն ամսկ ամսականը 2½ ֆր. հաշուելով՝ եւ 1896 մայիս ամսին անդին չանցնելու պայմանով։

Նամակ եւ ծրար պէտք է դրկել հեռևեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

ԳԱՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, երբէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն դրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։ Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 մէկ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲԱԺՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

"ԱՐՄԷՆԻԱ,,Ի

ԺԱ ՏԱՐԻՆԵՐՋԱՆԻՆ

(1895 *ՕԳՈՍՏՈՍ* — 96 *ՄԱՅԻՍ*)

Անոնք որ 11րդ տարեշրջանի ընկերէն (1895 օգոստոս) բաժնորդագրուած են և կուզեն շարունակել մինչեւ այս շրջանի վերջը (1896 մայիս 31 Ն. Տ.), կը պարտին վճարել ամբողջ շրջանին համար բաժնորդագին 20 ֆրանգ միայն զոր կարող են նաեւ մաս առ մաս վճարել կանխիկ։

Այսուհետեւ 11րդ շրջանի սկզբէն բաժնորդագրութիւն չընդունուիր։ Կարելի է բաժնորդագրուիլ 1895 դեկտեմբեր ամսէն և կամ ուրէք ամսի գլխէն (Ն. Տ.) սկսելով քանի ամսի համար որ ուզուի, ամսական 2 ½ ֆրանգի հաշուով և 1896 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Անոնք որ կը փափաքին Արմէնիան ստանալ, բայց կարողութիւն չունին ամսական 2 ½ ֆրանգ լրագրի վճարելու, ամսական մէկ ֆրանգի հաշուով կարող են բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզեն, 1896 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով և տարեկան 20 ֆրանգ կամ ամսական 2 ½ ֆրանգ վճարողուիրնց ծանօթ եղող մի բաժնորդի ծրարին մէջ դրուելով իրենց թերթ առանց հասցէի։ Բաժնորդագինը կանխիկ պէտք է դրկեն, գէթ մէկ մէկ ֆրանգ հասցունելով մեզ կանոնաւորապէս ամէն ամսի սկիզբը, եթէ չեն կարող մի քանի ամսականը մէկէն դրկելու։

Կը խնդրուի մեր հին բաժնորդներէ որ իրենց բաժնորդագրութիւն վերանորոգած ժամանակ՝ իրենց ղրկուած Արմենիայի վերջին թիւերէ մէկի գօտին որի վրայ հասցէն գրուած է, իրենց նամակի մէջ դնելով ղրկեն մեզ։ Այս կերպով շփոթութիւնների առջեւը կառնուի իրենց անուն վերստին արձանագրուած ժամանակ։ Նոյնպէս եթէ մէկը ուզէ իր հասցէ փոխել, անպատճառ պէտք է որ իր նոր հասցէի հետ մեզ ղրկէ նաեւ իր հին հասցէ որով կատանար լրագիրը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նամակ Թիւրքիաէն (վ.ա.). — կարեւոր գոյժեր. — կեսարիաէն գոյժեր. — Զէյթունց. — Մեծ պետութիւնները եւ Բ. Դուռը. — Հայաբնակ 3 նահանգների քրիստոնեայ փոխ նահանգապետները. — Ջաղուածներ Սրարատեան. — Ռոմանիայի պաղտատի Հայերին. — Շրջաբերական Սուչաւայի Հայերի Հոգաբարձուրեան. — Թիւրքիաէն լուրեր. — Նոր հրատարակութիւններ. — Ցայտարարութիւն Գանիրեի Հայոց Ընտրողական ընկերութեան։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԷՆ

Վան, Նոյ. 29/11 դեկտ. 95

Նախորդիւ գրեցի թէ աւարառութիւնը դադրիլ սկսած է, կողոպտելու բան մնացած չթողնելով. քաղաքէս կէս ժամ հեռու կեցաւ Քիւրտերի ասպատակութիւնը. քաղաքը Այգեստանովը և շրջակայ արուարձան 3 6 գիւղերով պիտի մնար քաղաքացի Թիւրքերի բաժին։ Սակայն ամէն օր սպասուած այդ ջարդ և աւար դեռ չպատահեցաւ քաղաքին մէջ, թէեւ ամէն փոստին շրջակայ և հեռաւոր քաղաքներէ ջարդերը Հայերի մնահոգութիւնը և Թիւրքերի մոլեռանդութեան բորբոքումը կաւելցուցանեն։ Ճիշդ է որ ասկէ ամիս ու կէս առաջ Թիւրքերը Հայերի բազմութենէն ակնածելով հանդարտ կեցած էին, բայց անկէ ի վեր կառավարութիւնը, յայտնի չէ թէ ինչ դիտումով, բոլոր զէնք բռնել կրցող Թիւրքերուն զէնք և մթերք բաժնեց ըէտիֆ և էհթիյաթ ժողվելու անունով. ատկէ զատ, շրջակայ գաւառներէն բազմաթիւ նոր գունդեր քաղաք բերուեցան և այժմ Թիւրքերի զինուորական ոյժը անհամեմատ մեծ է։ Որոշ չգիտենք դեռ միւս քաղաքների ջարդի մանրամասնութիւնները. միայն նախկին փորձառութեամբ գիտնալով որ Թիւրքերը չուկայէն կը սկսին կողոպուտը և ջարդը, զգուշութեան համար խանութները, չուկայներ փակեցին Հայերը և այս մէկ ամիս կը լինի որ փակ կը մնան, բացառութեամբ մի քանի աղքատ արհեստաւորներուն կամ չահամոյ առեւտրականների խանութներին։ Եթէ չուկան այսպէս փակ մնալ չարունակուի, ջարդը կը յետաձգուի, որովհետեւ թաղերին մէջ Թիւրքերը չեն կարող մնալ առանց մեծ կորուստի. Հայերն որոշած են բոլորովին գառնուկի դեր չկատարել. իրենց թաղերի և տների մէջ պաշտպանելու և պարնելու միջոցներ ալ չեն պակիր իրենց, իսկ չուկան երթալու համար կը պարտաւորուին անզէն և անպատպար մնալ։ Մնաց որ Հայերը ստուար մեծամասնութեամբ համոզուած լինելով որ իրենց այժ պաշտպանողական դիրք մը պահելու միայն բաւական է, ուշադրութիւն չդարձուցին օտար կուսակցութեանց գործակալների դրդումներին ապստամբական ցոյց մ'անելու, որին պիտի հետեւէր մի ջարդ և աւար՝ զինուորական գունդերի և թնդանօթների մասնակցութեամբ։ Ցայտնի չէ թէ ինչո՞ւ այդ գործակալներին այնքան հաճելի մի բան էր վան քաղաքին օր առաջ աւերման մատնուիլը։

Միւս քաղաքների մէջ, Էրզրում, Տրապիզոն, Բաղէշ, Տիգրանակերտ, Խարբերդ, Երզնկա, որքան որ կը լսենք, ահռելի կոտորածներ եղած են. ամենէն փիչը 4.500 մեռևալներ թաղած են. չուկաներն ամենէն շատ վնասուած են և այդ պատճառով առեւտրական գործերի ընդհանուր դադարում տիրած է. ո'չ փոխատուութիւն կը լինի և ո'չ փոխանակագիրներուն կամ մուրհակների վճարում։ Էրզրում, այս չաբթուան լուրերին նայելով, երկրորդ անգամ կոտորած կրեր է. 50 նշանաւոր Հայ վաճառականներ մորթուեր են եղեր այս անգամ։ Բազէշէն եկած մի լուրի նայելով, ջարդէն երեք օր ետք կառավարութեան զօրքերը հասեր և մի խանի մէջ փակուած 5.600 Հայերին պաշտպանութեան խոստումով դուրս հաներ են. բայց փոխանակ զանոնք իրենց տուներն առաջնորդելու, ոստիկանատուն տարած են և այնտեղէ արձակեր են միայն անոնք որ ստորագրած են մի հեռագրի տակ թէ «Թիւրքերը յանցաւոր չեն եղեր յարձակման մէջ, Հայ խռովարարներ են նախայարձակ եղողները»։ Միւս տեղերի ջարդերին ալ այդ պատրուակ տրուած է և այստեղ ալ այդպէս կը կրկնեն Թիւրքերը, մինչդեռ եկած շատ մը լուրերէ կը տեսնուի որ Հայերի միակ յանցանքն այն եղած է որ դիմադրելու և ապստամբելու միջոցներ չեն ունեցած։ Խարբերդէն եկած մի նամակէ կիմանանք որ այնտեղ ամերիկեան միսիոնարներէն բոլոր հաստատութիւնները, տուն, դպրոց և այլն, կրակի և սուրի տրուած են. միսիոնարներն այնտեղ դրեթէ մերկ մնացած են։ Մ'ուէն դեռ կոտրածի ձայն չկայ։

Խզանի Ջարդի և կրծնափոխութեան մանրամասնութիւնները ստացուեցան. ահաւասիկ ամփոփումը։ Ներքին Կարկառի, Հարգու, Թաղու, Ցաբրենց, Եղեգիս, Ցակարծու, Բերկրի, Խնձորուտ, Ցալս, Ծկոր, Որիզ գիւղերի 276 տուն Հայերէն նահատակուած են 37 մարդ (որոնցմէ երկուքը քահանայ և վարդապետ). միւսները, ամբողջ ընտանիքներով, կրծնափոխ եղած են։

Վերի Կարկառի (որ վանի վիլայէթին կը պատկանի), Ծախոր, Ծերկու, Խրոյրենց, Տալ, Մըլկանց, Միւլք, Ցարդենց, Կեչի, Ցակոթ և Ցաղիւ գիւղերի 140 տուներէն 31 անձ նահատակուած են. Ծախոր և Ծերկու գիւղերի միւս ամբողջ ընտանիքները կրծնափոխ եղած, իսկ միւս ցրիւ թողեր փախեր են գաւառէն։ Գաւառը ամբողջովին կողոպտուեր է. կրծնափոխ Հայերին ստիպած են ըստ իսլամութեան օրէնքի երենց եղբօր կիներն հետ զուգաւորիլ, կնութիւն ընել, երենց հետ գալ ուրիշ Հայեր ջարդել կամ կողոպտել։ Կանանց և աղջկանց գեղեցիկներն ալ Հարէմների մէջ առնուած են։

Այս պահուս քաղաքիս մէջ 3,000ի կը հասնի փախստական գիւղացիներ թիւը, որոնցմէ 1,500ը ամերիկեան միսիոնարուհի Միս Բիմպըլի օրէ օր բաշխած նպաստով կապրին, միւսները երենց ծանօթ քաղքցիներէն տուները տեղաւորուած են, մեծ մասը մ'ալ Ազգ. իշխանութիւնը և Թաղ. խորհուրդները պատսպարած են։ Գաղթելոց օգնող յանձնախումբ մ'ալ կարգուած է Առաջնորդարանէն. բայց մինչեւ այսօր մի մեծ բան չկրցաւ անել, չնորհիւ այն հանգամանքի որ խառն տարրերէ կազմուած է այդ մարմին, որի անդամներէն մէկ մասի ծուլութիւնը միւսը կանգամալուծէ։ Այդ յանձնախումբ առաջուց գոյութիւն ունեցող երկու տարբեր յանձնախումբերի ձուլումմ'է. ձուլուելէն առաջ այդ մարմիններէ մին յաղողած էր 200 ոսկի հանգանակել կանխիկ և քիչ շատ շը-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հատոր Ա. Ի Ս Տ Ո Ր Ի Ա Ն Ե Ր Ի Ն Ե Ր Ի Ց Ա Ռ Ա Ջ

Հեղինակեց Ս. Գ. Ղ Ա Զ Ա Ր Ի Ա Ն

Գին 9 ր. ոսկի (բաց փոխ.), ուղարկուի ի տեղի ստանալու վրայ 18/30 ր. արծաթով։

Ընդարձակ տեղեկութիւններ կը գտնուին հետեւեալ գրքերուն մէջ՝

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ։ Հատոր Ա. Ի Ս Տ Ո Ր Ի Ա Ն Ե Ր Ի Ն Ե Ր Ի Ց Ա Ռ Ա Ջ։ Հեղինակեց Ս. Գ. Ղ Ա Զ Ա Ր Ի Ա Ն։ Գին 9 ր. ոսկի (բաց փոխ.), ուղարկուի ի տեղի ստանալու վրայ 18/30 ր. արծաթով։

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ։ Հատոր Բ. Ի Ս Տ Ո Ր Ի Ա Ն Ե Ր Ի Ն Ե Ր Ի Ց Ա Ռ Ա Ջ։ Հեղինակեց Ս. Գ. Ղ Ա Զ Ա Ր Ի Ա Ն։ Գին 9 ր. ոսկի (բաց փոխ.), ուղարկուի ի տեղի ստանալու վրայ 18/30 ր. արծաթով։

Ընդարձակ տեղեկութիւններ կը գտնուին հետեւեալ գրքերուն մէջ՝

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ։ Հատոր Գ. Ի Ս Տ Ո Ր Ի Ա Ն Ե Ր Ի Ն Ե Ր Ի Ց Ա Ռ Ա Ջ։ Հեղինակեց Ս. Գ. Ղ Ա Զ Ա Ր Ի Ա Ն։ Գին 9 ր. ոսկի (բաց փոխ.), ուղարկուի ի տեղի ստանալու վրայ 18/30 ր. արծաթով։

Ընդարձակ տեղեկութիւններ կը գտնուին հետեւեալ գրքերուն մէջ՝

ԱՐՁԱԿԱՆ ԴԻՊՎԱԾՔ

Ի ՍՈՒՐԻԱ

Ի ՍՈՒՐԻԱ

Ի ՍՈՒՐԻԱ

Ծնացածները խաներէն և իրենց ապատանած ուրիշ տեղերէն ժողվելով՝ կառավարութեան դուռը տարին, վըրանին խուզարկեցին զէնք փնտռելու պատրուակաւ. բայց իրենց վրայ պըզտիկ դանակ մ՝անգամ չգտնուեցաւ. կոտորածը, աւերը և հրդեհն որ 5.6 ժամ տևեցին, բնակիչ ըրին մեր բոլոր ստացուածքը։

Անոնք որ ողջ տուն վերադարձան, արդէն իրիկուն եղած էր և հոն, իրենց տան մէջ կը բացուէր աւելի սարսափելի մի տեսարան, որուն նմանը ցարդ պատմութեան մէջ չէ տեսնուած. ոմանք իրենց կիները յափըշտակուած գտան, ոմանք իրենց կանանց ծիծերը կորսուած, ոմանք զաւակները կորսուած և ոմանք ալ իրենց երախաները արեան մէջ թաթախուած տեսան։ Զեռքս առաջ չերթար այս նողկալի տեսարանները ամբողջութիւնը նկարագրելու, գի քանի միտքս գան այդ հրէշային եղելութիւնները, ինքզինքս դուրս կեզամ։ Աւելցուցէք ասոր վրայ և նիւթական տառապանքը, վասն զի չատեր իրենց ձմրան ուտելու պաշարէն, անկողնէն ու հագուստներէն ալ զրկուած են։

Ո՛վ Աստուած իմ, այս ո՛րչափ անխղճութիւն, այս ի՜նչ գազանութիւն. ո՞ւր էք, Ափրիկէի գերիներն ազատող քրիստոնեայնե՛ր. ձեր միսիոնարներու միջոցաւ եղբայրասիրութիւն, գիտութիւն քարոզող եւրոպական ազգե՛ր, ո՞ւր էք. միթէ չէ՞ք լսեր դեռ։

Կարծես այսքան տակնվրանք չէր բաւեր. 2 օր վերջ ձգացած Հայերուն կոտորելու համար Հաճըլար, Գըզըլէօրէն, Ասարլըք գիւղերէն 2000-2500ի չափ վայրենի Թրքեր ժողվուելով՝ յարձակել ուզեցին, մէկ մասը՝ Ս. Աստուածածնայ եկեղեցին, միւս մասը՝ պահճէի թաղին վրայ, բայց չկրցան յաղթել. Նկատէ և նէմչէհիրիչէն զօրքեր բերուած լինելով՝ վայրենիները հանդարտեցուցին։

Ո՛վ Աստուած, ի՜նչպիսի դարի մէջ կապրինք. Հայ ժողովուրդը բոլորովին չուարած ձգացած է. Թիւրք տեսնալնուն սոսկում կզգան բոլոր Հայերը։ Զարկին առին Հայերը դահիճներուն կը պաղատէին որ ստացուածքնին իրենց ըլայ ու միայն իրենց կեանքին խնայեն. բայց անոնք աւելի սաստկըէն կիջեցնէին զէնքը իրենց խեղճ զոհերուն վրայ։

ԶԷՅԹՈՒՆ

Հալէպէն եկած լուրերուն նայելով, Թիւրք զօրքերն անցած երեքշաբթի օր յաղողեր են առնել Զէյթունն ու անոր բերդը, թէեւ նախորդ օրը պարտութիւն մը կրած էին։ Հայերն իրենց դիրքերը թողուվ քաշուեր են լեռները իրենց զէնքերով մէկտեղ։ Զէյթունցիներէն 10,000 հոգի մնած լինելու հեռագրալուրը հաստատող ուրիշ հեռագիրներ եկած չեն դեռ։ Կ.պօլսէն անգլիական աղբիւրէ եկած մի հեռագիր կըսէ թէ կռուին մէջ Զէյթունցիներէն 2,500 հոգի և Թիւրքերէն 250 հոգի սպաննուած է։

Զէյթունի կիրճը լցուած է մարդ, կին, տղայ, Հայ փախստականներով։ Շատ կը վախցուի որ Թիւրք զօրքերն առանք ջարդած լինին։

Վեց մեծ պետութիւնների դեսպաններն ուրբաթ օր իրենց թարգմաններ ղրկեցին պալատ, ուր կեդրոնացած է այժմ օսմ. կառավարութիւնը, որպէս զի միջոցներ ձեռք առնուին այդ կոտորածի առջեւն առնելու համար։ Այսու ամենայնիւ շատ յոյս չկայ որ դեսպանների այդ տարաժամ աղաչարարութիւն օգուտ մ՝աւնենայ և կը վախցուի որ կոտորածն արդէն կատարուած լինիյած լինի։

— Պաշտօնական մի զեկուցման նայելով, Զէյթունէն վերստին Թիւրքերէն առնուիլը դեկտ. 21ի չաբաթ օր եղած է։

— վերջին լուրերուն նայելով, լեռներուն բարձրերը քաշուած Զէյթունցիները իրենց տեղերէ կը նեղացունեն դարձեալ զօրքերը։ Կ. պօլսի դեսպաններն իրենց միջնորդութիւն առաջարկած են վերջնական խաղաղութեան մը պայմաններուն վրայ բանակցելու համար։

ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ Բ. ԴՈՒՌԸ

Կ.պօլսէն կը հաղորդեն «Թայմզ»ին թէ Ֆրանսայի, Ռուսիայի և Անգլիայի դեսպանական առաջին թարգմանները նախատողութիւններ ուած են Բ. Դրան, Հայոց կան բարենորոգումներուն գործադրութեանը վերահսկող յանձնաժողովի վարմունքին նկատմամբ։ Ստացուած պատասխանները չատ գոհացուցիչ համարուած չեն։

— Անգլիական դեսպանը պահանջեր է Բ. Դուռէն որ Մուշի գատին Կ.պօլիս կանչուի, որովհետեւ մահմետականները կը գրգռէ այնտեղ քրիստոնեայներին դէմ։

— Սուլթանը նոր տարիին առթով, արաբական 2 ընտիր ձիեր և ընտիր ծըխախոտ մեծ քանակութեամբ նուէր ղրկեց Զարին։ Արիֆի փաշան, որ այդ նուէրներ կը տանի, Սուլթանէն Զարին ուղղուած մի ինքնագիր նամակ ալ ունի։ Կ.պօլսի ռուսական դեսպանատան երրորդ Թարգմանը կընկերանայ իրեն։

— Հայաստանի բարձր պատուիրակ Շաքիր փաշան հեռագրեր է կառավարութեան թէ կանոնաւոր զօրքերի Թոշակներն անվճար ձգելուն համար, անոնք ալ չեն ուզեր հնազանդիլ. դասալիք կը լինին և կերթան համիտիյէ հեծելազօրքերին պէս հուղկահար դառնալով, ճանապարհները մարդ կը կողոպտեն։

— Ռուսական նաւատորմիղը Օսմանեան ճանբայ ելեր է, բայց յայտնի չէ դէպի ո՞ր երթալու համար։ Անցած չորեքշաբթի իրիկուն այս լուր իմացուածին պէս Կ.պօլսի մէջ սաստիկ յուզում տիրեր է։

— Իտալական «Մօրօսինի» գրահաւորը շաբաթ օր հրաման ստացաւ Եգիպտէ երթալու։ Իտալիան առ այժմ ուրիշ չունենաւ չափի զրկէ Աբեւելքի ջուրերը, բայց համաբերով Բիզմօնթէ, Բարթինօբ և Մօրօսինի գրահաւորներն ու Մէսթրէ և Արքիմէտ երկու պահականաւները, որոնք այժմ հոն կը գտնուին։

— Սոֆիայէն կը հեռագրեն Աժանս Հաւասին (ուրիշ աղբիւրէ դեռ չէ հաստատուած այս լուր) թէ Ամերիկայի Միացեալ-Նահանգներու Կ.պօլսի դեսպան Տ. Թըրըլ Կ պօլսէն մեկնած է որովհետեւ գոհացում չէ տրուած Բ. Դուռէն իր արած պահանջներուն.(ամերիկեան մի պահականաւի վոսփորէն ներս մտնել, 600,000 օսմ. ոսկի — 15 1/2 միլիոն ֆրանգի չափ — տուգանք վճարել միսիոնարներուն, յանցաւորները պատժել Միացեալ-Նահանգներու վերահսկողութեան տակ և ապագային համար ապահովութեան ե. րաշխաւորութիւններ տալ)։

ՀԱՑԱՐՈՒԱԿ 3 ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԿՐԻՍՏՈՆԵԱՅ ՓՈԽ-ՆԱՀԱՆԳԱՊԵՏՆԵՐԸ

Կ.պօլսի լրագիրներուն պաշտօնական բաժնին մէջ կը կարդանք պաշտօնաբաշխութիւններուն հետեւեալ ցանկը։

Կարինի Նահանգապետի օգնական անուանուեցաւ հեռագրական և Թղթատարական վերատեսչութեան օտար Թղթակցութիւններուն քարտուղար Սէլիմ Հօսա էֆէնտին (Ասորի)։

Բաղէշի Նահանգապետի օգնական անուանուեցաւ Լննկիւրիի Նահանգապետի նախկին օգնական Անդուան էֆէնտին (Լատին)։

Սեբաստիայի Նահանգապետի օգնական անուանուեցաւ Այտընի Նահանգի ընդհանուր դատախազի նախորդ օգնական Արիստիի էֆէնտին (Յոյն)։

Ուրեմն Սուլթանն սկսեր է իր խոստացած բարենորոգումներ գործադրել!! Եւ այդ բարենորոգումներուն գործադրութեանը համար հարիւր հազարաւոր Հայեր կոտորուեցան և կը կոտորուին տակաւին որ մի ոմն Սէլիմ Հօսա էֆէնտի քրիստոնեայ փոխ-Նահանգապետ լինէր Կարինի։

Ինչպէս կերեւի, վան դեռ չէ արժանացած բարենորոգման այդ մեծ չնորհի, որովհետեւ տակաւին չեն յաղողած Թիւրքեր վան քաղաքին մէջ ալ մի կոտորած անելու։

ԲԱՂՈՒԱԾՆԵՐ «ԱՐԱՐԱՏ»ԷՆ

Էջմիածնի պաշտօնական թերթի, Արարատի (1), հոկտեմբերի ամսաթուին կը քաղենք հետեւեալները։

Ղրկուած է կոնդակ չրջաբերական յանուն Հայագգի գաղթականութեան Ռումանիոյ, Պուլկարիոյ և այլ տեղեաց. Հմր. 718. որով ընդ Հայրապետական օրհնութեանց և պատուիրաց, Ծանուցանի նոցա կարգումըն Մկրտիչ վարդապետի Տէրունեան ի պաշտօն այցելու հովուի և քարոզչի այնց կողմանց։

Ղրկուած է կոնդակ յանուն Հայ գաղթականաց Միացեալ Նահանգաց Ամերիկայի, Հմր. 766, վասն կարեկից ջանից և նպաստից յօգուտ սովելոցն Սասնոյ։

Տաճկահայք

Ծա՛նր է մեր Տաճկաստանի Հայ եղբարց վիճակը։ Այժմ այլ եւս մի-

(1) Արարատ ամսաթերթի տարեկան բաժնորդագինն է 5 րուբլ. Ռուսաստանէն դուրս ղրկուելու համար։ Դիմել Արարատի խմբագրութեան հետեւեալ հասցէով.

Rédaction du journal « Ararat »
ETCHMIADZIN (Caucase-Russie)

այն հարստահարութեանց, հալածանքի, լկանքի, առեւանգութեանց և բանդարգելութեան լուրեր չեն, որ գալիս են այնտեղից, այժմ միայն կոտորածի ձայներ են հասնում մեզ։ Երկու ամիս է արդէն, որ ամենայն օր հեռագիրը կոտորածների լուրեր է բերում. սեպտեմբերի 18ին մեծ աբեան նախճիր է գործուել Կ. Պօլսում, սեպտեմբերի 31ին Տրապիզոնում անխիղճ կոտորել են Հայ տղամարդկանց, Տրապիզոնից մինչեւ Մարաշ մի ամբողջ հեղեղատ է կազմուել, այրել են Տրապիզոնի Հայ գեղերը և քնակիչներին սրի անդկացրել, կոտորել են Բաբերդի Հայերին, մեծ արիւնհեղութիւն է պատահել Էրզրումում հոկտ. 18, որի մանրամասնութիւնները անկարագրելի են։ Ցասումի կոտորածից ազատած Հայերն անխուսափելի մահուան են մատնուած, ոդորմութեան կարկառած ձեռներին արգելուած է օգնել այդ խեղճերին։ Սոսկալի են նոյնպէս Բիթլիսի, Դիարբեքիրի և Սուազի կոտորածները։ Հայ քրիստոնէութիւնը բնաջինջ լինելու վրայ է. Ամենակալ Տէրը միայն կարող է փրկել մեր ս. եկեղեցին այդ փորձանքներից։ ուրեմն ամեն մի Հայ քրիստոնէի պարտքն է ի սրտէ աղօթել և վերին Տնօրէնութեան գթութիւնն հայցել. «Աւրի՛ Աստուած հարցն մերոց, որ ապաւէնգ ես նեղելոց, հա՛ս յօգնութիւն ծառայից քոց, լե՛ր օգնական ազգիս Հայոց»։

Այս սարսափելի կոտորածներէ մասին ժամէ ի ժամ սպասուում է Ս.Էջմիածնում ամենապատիւ Տէր Պատրիարքի զեկուցումն։

(Արարատ)

ՌՈՒՄԱՆԻԱՅԻ ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՑԵՐԻՆ

Ռումանիայէն մեր Թղթակիցներէն մին որ իր դիրքով կարող է ստոյգ տեղեկութիւններ իմանալ և օրի ազգասիրական զգացմանը վրայ կասկած չունինք, պարտք համարած է Արեւմտեան միջոցով զգուշացունել Ռումանիա ապաստանած պանդուխտ Հայերը որ չրջահայեաց և խոհեմ կերպով վարուին, ապարդիւն պոռոտախօսութիւններէ և ապաժամն ցոյցերէ զգոյշ կենալով, որովհետեւ ռումէն կառավարութիւնն որոշեր է անհնոյ արտաքսել իր երկրէ այն օտարահպատակ Հայեր որոնց վրայ կասկածներ կը ծագին թէ ընկերվարական յեղափոխական գործունէութեան մասնակից են։

Որչափ ալ ռումէն կառավարութիւնը Թիւրք դեսպանի գրպարտութիւններուն ականջ դնելու չափ խոնարհ դիրքի մը մէջ չգտնուի և ռումանաբնակ ազդեցիկ Հայեր իրենց ազգակիցներուն անմեղութիւնը պաշպանելու յօժարամիտ գտնուին, այսուամենայնիւ զգուշութիւնը յանձնարարելի է միշտ ներկայ հանգամանքներուն մէջ։

Թղթակիցը իր նամակի վերջ կը յարէ հետեւեալ արդարացի նկատողութիւնը։

«Այս տեղեկութիւնները Ձեր թերթի միջոցով իմ ազգակիցներուս հաղորդելով, կը յուսամ թէ ծառայութիւն մը մատուցած կը լինիմ այն պանդուխտ թշուառ ազգայնոց որոնք հազիւ իրենց օրապահիկը կրնան վաստկիլ իրենց աշխատանքով. ի՛նչ մեծ կը լինի նոցա դժբաղդութիւնը եթէ քաղաքէ քաղաք ալ արտաքսուին։ կը կարծեմ թէ ա՛լ բաւ են տրուած անօգուտ զոհերը։»

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՍԻՉԱՒԱՒԻ ՀԱՅԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ

Ալեուաշուք Տէր և Սիրելի Հայրենակից

Գոյժերու չարք մ՚է որ երկար ժամանակէ ի վեր կը սարսռեցնէ ամբողջ աշխարհ, թուրքիայեցիք մեր եղբարց կրած հանապազօրեայ տանջանաց և ազէխարշ մարտիրոսութեանց մասին։ Ընդհանուր կոտորած մ՚է, որ գարերէ ի վեր չքնաւած վայրենութեամբ նախճիրներ կը դործէ դրեթէ ամբողջ հայաբնակ գաւառներու մէջ, և այսօր Հայը, նահատակութեան դրօշը պարզած, արեան մէջ կը տապլտկի անօրէն Թրքի դիւահարբորբոք գազանութեան երեսէն։

Մ՚էկ կողմէ գազանային այս կոտրած, միւս կողմէ չարաղետ սով՝ քնացուցած հետեւանք այս անգութ աւերմանց, կօրո՛ւստ կ՚սպառնան Հայաստանի բազմաչարչար զաւակաց։

Օգնութի՛ւն կը գոչեն մեր արիւնաշաղախ անդէն եղբայրները, կը հառաչեն ցրտագող մեր քոյրերն ու մանուկները....։ Գո՛ւթ կը հայցեն, օգնութի՛ւն կը պաղատին. օգնութի՛ւն։

Ա՛յս է ահա ընդհանուր տեսարանը նահատակ Հայաստանի։ Ձպէտք է խուլ ձեռնք այս հեծեծանաց. ցո՛յց տանք հանդիսապէս թէ մեր սրտերը երբէ՛ք չեն զգրաւած տկոր ուրելէ մեր արեւակցաց այս ահռելի տառապանաց նկատմամբ։ կատարե՛նք մեր սուրբ պարտքը։ Մեր եղբայրներ և քոյրերը կը զոհեն իրենց կեանք. մեք ալ գոնէ կարկառենք մեր ձեռը յօգնութիւն։ Ա՛խ, եթէ դեռ ուշանանք, դուցէ ապաչրենանք ո՛րու օգնելու։

Փութա՛նք, վասն զի ներկայ ժամանակը վճռական է։

Այս նպատակաւ մեք կազմած եմք աստ մի յանձնաժողով, և ըստ ներելոյ մեր կարողութեան, հանգանակութիւն կատարելով արդիւնքը յուղարկած եմք Ամեն. Ս. Պատրիարք Հօր Կ.պօլս։ կը շարունակենք մեր ձեռնարկութիւն։

Արդ ներկայիս հրաւէր կարգալով Ձեր ազգասէր ղդացմանց, կը սիրեմք հաւատալ թէ պիտի բարեհաճիք հնարաւոր միջոցներ ձեռք առնուլ և կարապետ լինել ժողովրդեան, նպաստ հասցնելու համար մեր արկածեալ և տառապեալ ժողովրդեան։

Ձայնակցելով բիւրաւոր արկածեալ լոց չնորհապարտ մաղթանաց, մնամք խորին յարգանօք

Ի դիմաց ազգ. Հոգաբարձութեան
Նախագահ
Ասպետ վարդերես
Կրպտ. Ֆոն Բրունգուլ
Սուչաւա 1 դեկտ. 1895

ԹԻՒՐՔԻԱՅԷՆ ԼՈՒՐԵՐ

Գուքրէչի օսմանեան դեսպան անուանուեցաւ Սուլթանի քարտուղարներէն Հիւսէյին Ֆեազիմ պէյը։

— Սուլթանի առաջին ախոռապետն և անուանի Ֆուատ փաշայի Թոռն եղող Իզզէթ փաշայի ձերբակալութիւը գրած ենք նախորդ Թուով։ Այժմ կիմացուի որ Իզզէթ փաշան մի պատերազմական ատեանի առջեւ դատի պիտի քաշուի իբրեւ քրէական յանցաւոր, որովհետեւ համարձակեր էր Թիւրքիոյ ներկայ վիճակը տխուր գոյներով նկարագրող մի տեղեկագիր մատուցանել Սուլթանին։

— «Թայմըզ»ին հաղորդած են Կ. պօլսէն հետեւեալը։ «Անցած երկուշաբթի (դեկտ. 23) իրիկունէն ի վեր մի մեծ իրարանցում կը տիրէ Եըլտըզ-քէօշկին մէջ։ Մի ատրճանակ պարպուեցաւ պալատին մէջ։ Սուլթանն իսկոյն կանչեց պատերազմական նախարարը որ, մի կարճատեւ բացակայութենէ զատ, մինչեւ կէսօրէն վերջ պալատը մնաց։ Ձորեքշաբթի օր միայն հեռացաւ պալատէն, երթալ նախարարական խորհրդի նստին ներկայ գտնուելու համար։

«Պալատի պաշտօնեայներէն և ծառայողներէն չատերը հարցաքնութեան են. թարկուեցան թէ ի՞նչ էր այդ ատրճանակի ձայնը. բայց բան մը չհասկցուեցաւ։ Անոնցմէ չատեր բանտարկուած են։ Սուլթանը դեռ չփոթած և անհանգիստ վիճակի մը մէջ կը գտնուի։ Հանրային չինութիւնների նախարար Մահմուտ Ճէլալէտտին փաշան այս խորհրդաւոր դէպքի պատճառով 42 ժամ վար դրուեցաւ պալատին մէջ։ Կը կարծուի որ այս դէպքի մէջ մատ ունին այն Թիւրքեր որոնք Կ.պօլսի փողոցներին մէջ յայտարարութիւններ ձգեր էին թէ պէտք է Սուլթան Համիտը գահընկեց անել։

Անցած չորեքշաբթի օր աւելցուցին պալատի պահպանութեան յատկացած զօրքերի և ոստիկաններուն Թիւը։

— Անցած ուրբաթ օր չատ Թիւրքեր ձերբակալուեր են, կասկածելով որ սէլամլըգի արարողութեան միջոցին Թրքական մի ցոյց պիտի լինի ներկայ կառավարական դրութեան դէմ։ Ձերբակալուածներուն մէջ կը գտնուին ներքին գործերի նախարարութեան երկու պաշտօնատարներ և մէկ զինուորական պաշտօնեայ։

— Կառավարութիւնը մեծ դժուարութեան հանդիպած է Հալէպի և Ատանայի կուսակալներ նշանակելու համար։ Փաշաներէն որին որ առաջարկեց Սուլթանը, ամենքն ալ մերժեցին այդ պաշտօնները։ Կը յիշեն մեր ընթերցողները որ ամենէն առաջ նախորդ եպարքոս Ֆեամիլ փաշային առաջարկուեցաւ Հալէպի վալիութիւնը, որ հրաժարեցաւ և չուզեց հոն երթալ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շնորհակալութեամբ ստացած ենք **ԱՐԱՔՍ** գրական և գեղարուեստական պատկերազարդ հանդէսի 1895 տարեշրջանի Ա. գիրքը որի բովանդակութիւնն է հետեւեալը։

Մի քանի խօսք. Թմբագրութիւնից։ — Հատարակական խնդիրներ. Հայկական բարեգործական ընկերութիւնները. — Կիլիկիոյ մէջ ազգային դպրոց հիմնելու առթիւ. — Ռուս մամուլի մասին Հայկական խնդրի նկատմամբ. — Հայկական խնդիրը Անգղիայում. — Մի տեսութիւն Հայկական կիլիկիոյ հարստութեան վերայ։ — Տեղագրական. Սասուն, նրա նկարագրութիւնը, բնակիչները և նոցա բարքն ու վարքը։ — Բանաստեղծութիւններ. Իմ փէրին. — Իգիթ Սարդար. — Սասուն. — Իմ հայրենիքը. — Ծանր թախիծ. — Բանաստեղծի վիճակը (Բաֆֆի)։ — Մատենագրական. Որսորդ Բաղդոն. — Քիչատակարան մեռեալ տանից։ — Կենսագրական. Ի Տէր հանգ. Մկրտիչ կաթողիկոս Կիլիկիոյ։ — Ամեն. Տ. Գրիգորիս Եպ., նորընտիր կաթողիկոս Կիլիկիոյ։ — Մատենախօսական. Հայկական ճղնաժամն ի Թիւրքիա. 1894ի կոտորածը, նորա նախընթացները և նշանակութիւնը (Ֆր. Տ. Գրիվն)։ — Ազգ. յիշատակարան. — Ի Տէր հանգ. Ներսէս պատր. Վարժապետեանի կտակը.— Թղթակցութիւն Կ.Պօլսից։ — Ընդհանուր տեսութիւն. — վերջին անցքերի մասին. — Ջեմ-Թըրի միթինկը և Գլադստոնի ամբողջ ճառը. — Սուլթանի հրովարտակը հայկական բարեգործութիւնների մասին. — Ագդարարի հարիւրամեակի յիշատակին. — Հիւսիս լրագրի առաջին համարի առաջին երեսը. — Ամենայն Հայոց վեհ. կաթողիկոսը Պետերբուրգում. — Գեր. Արսէն արքեպիսկոպոս Ն.յարընեան։ — Այլ և այլք։

Գեղարուեստական բաժին. — Պատկերների մասին։

ԱՐԱՔՍի այս գիրքը կը պարունակէ 64 ընտիր պատկերներ որոնք հայկական վայրեր, Հայ կամ հայասէր նշանաւոր անձնաւորութիւններ կը ներկայացունեն և կամ գրքին գեղարուեստական բաժինը կը զարդարեն։

ԱՐԱՔՍի գեղարուեստական բաժինը մանաւանդ լանամքով պատրաստուած է և եւրոպական այդ կարգի թերթերին հետ կրնայ մրցիլ. իսկ գրական բաժինը յայտնի է արդէն վերոգրեալ բովանդակութենէն թէ ո՛րչափ հետաքրքրական նիւթեր կը պարունակէ։ Բայց ցաւալի է որ այսպիսի չքեղ և օգտակար հրատարակութիւն մը, չնայելով իր գնի ժանութեան (տարեկան բաժնորդագինը 10 ֆրանգ), բաւական քաջալերութիւն չդտնելով, հրատարակչի եռանդուն չանքերին հակառակ ստիպուած է ամեմայ ուշ հրատարակուիլ և ոչ թէ որոշուած ժամանակներին։

Հրատարակիչը, Տիար Ս. Գուլամիրեանց, կը յայտարարէ իր այս գրքի յառաջաբանին մէջ թէ բաժնորդագրութեան կանոնաւոր և կանխիկ չվճարուիլը պատճառ կը դառնայ մի այսպիսի կարեւոր հրատարակութեան դադարմանը, մինչդեռ ինք հրատարակիչը կը չանայ օրէ օր ընդարձակելով և հարստացնելով աւելի օգտակար դարձնել Արաքսը։

Շատ ցաւալի պիտի լինի արդարեւ եթէ իր տեսակի մէջ միակ եղող սոյն ազգային, ու դեղարուեստական գրականական հանդէսն ալ դադարման գատապարտուի, ոչ թէ գրաքննչական և կամ այդպիսի օտար ճշնչումներով, այլ Հայ բաժնորդներին իրենց բաժնորդագին չվճարելու և անտարբեր մնալու ճնշմանը տակ։

Արաքսի բաժնորդ գրուիլ ուզողը պէտք է դիմէ ուղղակի սա հասցէին.

Monsieur Siméon Goulamiriantz
SAINT-PÉTERSBOURG

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ընկերութիւնս որ հիմնուած է քաղաքիս մէջ ընթերցանութիւնն ծաւալելու և աղքատիկ Հայ ուսանողաց դաստիարակութեան նպաստելու նպատակաւ, պատիւ ունի ծանուցանել թէ իւր ընթերցատան բացման ձեռնարկած է. հետեւաբար կը փութայ յայտարարել բարեսէր ազգայնոց թարգմանչաց և հեղինակաց թէ ամենայն սիրով ամէն չնորհակալութեամբ կ՚ընդունի իրեն եղած ամէն գրական նուէրներն։

Ընկերութեանս հասցէն է

Société Arménienne
des Amis de la Lecture
CAIRE (Egypte)

Ի դիմաց գործ. ժողովոյ
Աթենապետ
Գ. ՇԱՆԹՈՒՆԻ
Ատենադպիր
Ա. Բ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ
Գահիրէ
20 դեկտ. 1895

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԷՆ Ա ԻՆՈՒԱՆ
ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐՔԱՑ ԱՇԽԱՐՀԻՍ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապրուած վարքուբարքով որչափ չարիքներու պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդւոյ ձեռքով ապանուած և անհետացած է աշխարհէն։ Գինն 1 ֆրանգ, (75 սանթիմ)։

ՏՆՕՐԷՆ—ԻՄՐԱԳԻՐ
Ս. ԳՈՐԳՈՒԱՂԱԼԵԱՆ
ՄԱՐՍԷԼ
Հայերէն տպարան Ս. Գորգուազալեանի

Le Gérant : François CARRIERE
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi
Allées de Meilhan, 44.